

Նկատառումներ ՀՀ ոստիկանության կողմից շրջանառության մեջ դրված «ՀՀ կառավարության 1998թ. հ. 821 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում տեղադրվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի թիվ 821 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, համաձայն որի առաջարկվում է ՀՀ քաղաքացու անձնագրի համար սահմանել 2 տարի առավելագույն ժամկետ, դրանով իսկ իրագործելով Պետաիրավական նախարարական կոմիտեի 29.09.21թ. նիստում տրված հանձնարարականը (ԿԱ/174-2021): Սա հեղինակի միակ հիմնավորումը: Թե ինչ է ասված Պետաիրավական նախարարական կոմիտեի 29.09.21թ. նիստում տրված հանձնարարականը (ԿԱ/174-2021) հայտնի չէ, քանի որ այն չի հրապարակվել:

Հետաքրքիր է սույն նախագծի հեղինակներն արդյո՞ք այս նախագիծը ներկայացնելուց առաջ այն համապատասխանեցրել են ՀՀ սահմանադրությանն ու ՀՀ գործող այլ օրենքների, մասնավորապես «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի պահանջներին: Այս առաջարկությունից ստացվում է, որ այսուհետ օրենքները պետք է համապատասխանեցվեն ավելի ցածր իրավաբանական ուժ ունեցող ակտերի պահանջներին, այլ ոչ թե հակառակը: Աբսուրդի ժանրից է, երբեմն ապշում ենք գործող իշխանությունների հեղինակած օրենսդրական առաջարկների բովանդակության անբովանդակության վրա:

Ավելորդ չեմ համարում հիշատակել ՀՀ սահմանադրության 5-րդ հոդվածի պահանջը («Իրավական նորմերի աստիճանակարգությունը»): 1. Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ: 2. Օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին, իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ սահմանադրական օրենքներին և օրենքներին: 3. Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Իսկ «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով («Անձնագիր ձեռք բերելու իրավունքը և անձնագրի վավերականության ժամկետը») ամրագրված է հետևյալը՝ «Մինչև 6 տարեկան քաղաքացիներին անձնագիրը տրամադրվում է 3 տարի վավերականության ժամկետով, 6 տարեկանից մինչև 16 տարին լրացած քաղաքացիներին՝ 5 տարի վավերականության ժամկետով, բայց ոչ ավելի, քան 18 տարին լրանալը, իսկ 16 տարին լրացած քաղաքացիներին՝ 10 տարի վավերականության ժամկետով: Ընդ որում, մինչև 16 տարեկան, ինչպես նաև 16 տարին լրացած նախազորակոչային տարիքի արական սեռի քաղաքացիներին անձնագիրը տրամադրվում է մինչև նրանց զորակոչային տարիքը լրանալը, իսկ զորակոչային տարիքը լրանալու դեպքում՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ստացած տարկետման ժամկետով:»

ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին:

ՀՀ սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ 1. Հայաստանի Հանրապետությունը հայկական սփյուռքի հետ իրականացնում է համակողմանի կապերի զարգացմանը և հայապահպանմանն ուղղված քաղաքականություն, նպաստում է հայրենադարձությանը:

Հարց է առաջանում՝ այսպես են նպաստում հայրենադարձությանը՝ 2 տարով ՀՀ քաղաքացու անձնագիր տրամադրելով մեր հայրենակիցներին:

ՀՀ սահմանադրության 40-րդ հոդվածի համաձայն՝ 1. Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք: 2. Յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունք: 3. Յուրաքանչյուր քաղաքացի և Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով բնակվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու իրավունք: 4. Ազատ տեղաշարժվելու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու իրավունքը սահմանափակման ենթակա չէ:

Փաստորեն սույն նախագծով հեղինակը մտադրություն ունի այդպես սահմանափակել ՀՀ քաղաքացիների ՀՀ մուտք ու ելքի իրավունքները, զրկել նրանց օտարերկրյա պետությունների կողմից երկարաժամկետ մուտքի արտոնագրեր/վիզաների ստանալու լեգիտիմ ակնկալիքից:

Այն քաղաքացիները, որոնք գտնվելու են արտերկրում, կրթության ու աշխատանքի նպատակով, կամ այդ նպատակով են մեկնելու, ապա կանգնելու են փաստի առաջ:

ՀՀ քաղաքացու անձնագրի գործողության ժամկետները պետք է լինեն երկարաժամկետ, որպեսզի քաղաքացին կարողանա պլանավորել իր գործողությունները, մասնավորապես՝ իր տեղաշարժը: Բացի այդ, թե՛ ՀՀ քաղաքացու, թե՛ պետության համար առաջանալու է ֆինանսական ավելորդ բեռ, անընդհատ անձնագրի տպել և անընդհատ վճարել դրա համար: Այնուհետև արհեստական հերթեր ստեղծել լիազոր մարմինների գրասենյակների դռների առաջ, ինչպես դա անում են հիմա՝ ՊՇՌ-թեսթ կամ պատվաստում, ժամկետանց անձնագրերի փոխանակման ժամանակ: Նույնիսկ այդ հերթերը չեն կարողանում կարգավորել: Իսկ պատկերացնում եք, թե 2 տարին մեկ ինչ ծավալի ծանրաբեռնվախություն է դրվելու անձնագրային և հյուպատոսական գրասենյակների վրա: Իհարկե չեն էլ կանխատեսել այդ ապագան, արդեն սկսում եմ վախենալ նրանց պատկերացրած ապագայի գալիքից:

Ի դեպ, յուրաքանչյուր քաղաքացու անձնագրի գործողությունը պետք է վավեր լինի շենգենյան տվյալ երկրից վերադառնալուց հետո առնվազն 3 ամիս և պետք է պարունակի առնվազն 2 ազատ էջ վիզան փակցնելու համար: Այսպիսի պահանջ սահմանված է նաև ԱՄՆ և այլ պետությունների կողմից՝ մուտքի արտոնագիր տրամադրելիս: Ավելին, այս պետությունները նաև երկարաժամկետ վիզաներ են տրամադրում, օրինակ՝ ԱՄՆ-ն ՀՀ քաղաքացուն կարող է ստանալ մուտքի իրավեր 10 տարվա ժամկետով, եթե ՀՀ քաղաքացու անձնագրի գործողության ժամկետը դառնա 2 տարի, ապա ՀՀ քաղաքացին ստիպված է լինելու ԱՄՆ 10 տարվա վիզաները պահմանելու համար պահել և՛ հին նմուշի անձնագիրը, և՛ նորը կամ շատ հնարավոր է տվյալ պետությունները փոփոխեն իրենց վիզային քաղաքականությունը: Նույն ընթացակարգը նախատեսված է նաև շենգենյան և եվրոպական այլ պետությունների կողմից: Տրամաբանությունը ո՞րն է այս առաջարկի, անկեղծ, որևէ ձևով չեմ կարողանում ըմբռնել: Այն էլ՝ Օրենքի պահանջը թողած, առաջարկն անել միայն կառավարության որոշման մեջ: Նախագծի հեղինակը գոնե ընթերցել է ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածի պահանջը: Դեռ հարց է, արդյո՞ք այս նախագիծն անցել է իրավական ակտերի նախագծերի պարտադիր փորձաքննության, այնպիսի տպավորություն է, որ ՀՀ ոստիկանությունը Հայաստան պետության մեջ ինքնամեկուսացած և ինքնուրույն է որոշում կայացնող մի օրգան է:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ 1. Նորմատիվ իրավական ակտի կարգավորումը չպետք է դուրս գա իր առարկայի շրջանակներից: 2. Նորմատիվ իրավական ակտը չպետք է հակասի հավասար կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող Նորմատիվ իրավական ակտերին: 3. Համատեղ ընդունվող Նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ կիրառվում են օրենքի լիազորող Նորմում որպես ընդունող մարմին առաջինը նշված իրավաստեղծ մարմնի՝ Նորմատիվ իրավական ակտին ներկայացվող պահանջները:

Այսպիսով, ՀՀ սահմանադրության ու գործող օրենքների պահանջների խախտմամբ շրջանառության մեջ դրված այս անհիմն ու անբովանդակ նախագիծը հանել շրջանառությունից: Նույնիսկ իրավական ակտերի նախագծերի փորձաքննության էլ մի ուղարկեք: Այսպիսի հում նախագծերը չպետք է նույնիսկ հրապարակվեն, այլ պետք է այդպես էլ մնան հեղինակի սեղանին՝ սևագրության տեսքով:

Մերի Խաչատրյան

«Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության

հայկական կենտրոն» հասարակական կազմակերպություն